ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքրման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2021 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ, ջրի ելքի չափումներ): 57 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2021 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 69 գետի, Ախուրյանի, Երևանյան լիճ, Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Իրականացված դիտարկումների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-15-ում և Հավելված 3-ում:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաներերի նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 1. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	2.88	3.68	78	2.75	4.24	65	2.88	3.55	81
Դեբեդ	Այրում	26.3	19.8	133	13.9	20.5	68	13.2	16.4	80
Ձորագետ	Գարգառ	12.0	9.90	121	7.33	9.96	74	7.87	8.01	98
Աղստև	Իջևան	6.52	5.21	125	3.61	5.11	71	3.05	3.67	83
Գետիկ	Գող	2.75	1.83	150	2.00	1.73	115	2.03	1.18	172

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Սպիտակ քաղաքից ներքև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավանից վերև և գետաբերանի մոտ հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Սարատովկայից ներքև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և Իջևան քաղաքից ներքև հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև և Իջևան քաղաքից վերև հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Ամոնիում իոն
Կոնց. (մգN/լ)
Փամբակ գետ
10
8
6
4
2
0
Հոկտեմբեր
Նորմ
(2-րդ դաս)
№1 Փամբակ գետի գյ. Խնկոյանից վերև
№2 Փամբակ գետի ք. Սպիտակից ներքև
№3 Փամբակ գետի ք. Վանաձորից վերև
№4 Փամբակ գետի ք. Վանաձորից ներքև
Դիտակետ


Մոլիբդեն
Կոնց. (մգ/լ)
Փամբակ գետ
0.0025
0.0020
0.0015
0.0010
0.0005
0.0000
Հոկտեմբեր
Նորմ
(2-րդ դաս)
№1 Փամբակ գետի գյ. Խնկոյանից վերև
№2 Փամբակ գետի ք. Սպիտակից ներքև
№3 Փամբակ գետի ք. Վանաձորից վերև
№4 Փամբակ գետի ք. Վանաձորից ներքև
Դիտակետ


Մոլիբդեն
Կոնց. (մգ/լ)
Դեբեդ գետ
0.060
0.050
0.040
0.030
0.020
0.010
0.000
Հոկտեմբեր
Նորմ
(2-րդ դաս)
№5 0.5կմ Մարց գետի թափ. կետից ներքև
№6 Դեբեդ գետի ք. Այրումից վերև
№7 Դեբեդ գետի Սահմանի մոտ
Դիտակետ


Կոնց. (մգ/լ)
Պղինձ
Ախթալա գետ, գետաբերան
3.0
2.5
2.0
1.5
1.0
0.5
0.0
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
Ամիսներ


Կոնց. (մգ/լ)
Մոլիբդեն
Ախթալա գետ, գետաբերան
0.010
0.008
0.006
0.004
0.002
0.000
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
Ամիսներ

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը (հոկտեմբեր / 2021 թվական)



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախուրյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաներերի նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 2. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախուրյան	Ախուրիկ	3.88	5.63	69	4.20	5.76	73	4.14	5.72	72
Մեծամոր	Մեծամոր	1.80	18.5	10	2.00	20.9	10	2.20	24.7	9

Մակերևութային ջրերի որակ

Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախուրյան գետի ջրի որակը Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում նոյեմբերին գնահատավել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք, ինչպես նաև Ռանչպար գյուղից ներքև հատվածներում դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- որակի մոնիթորինգի դիտակետեր
- հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 3. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.29	3.33	69	1.96	3.44	57	1.88	3.10	61
Հրազդան	Արգել	2.75	3.73	74	2.61	3.69	71	2.21	3.13	70
Հրազդան	Երևան	1.99	3.32	60	11.06	3.94	280	10.2	5.93	172
Մարմարիկ	Հանքավան	0.67	0.48	139	0.68	0.51	1.33	0.64	0.45	142
Մարմարիկ	Աղավնաձոր	1.22	1.48	82	1.13	1.50	75	1.29	1.33	97
Քասախ	Վարդենիս	0.31	0.53	59	0.26	0.55	47	0.31	0.50	62
Քասախ	Աշտարակ	3.09	2.75	113	2.75	2.93	94	2.43	2.66	91

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Ամոնիում իոն
Կոնց. (մգN/լ)
Հրազդան գետ
10
8
6
4
2
0
№55 գյ. Դարբնիկի մոտ
№225 գյ. Գեղանիստի մոտ
№56 գետաբերան
Դեկտեմբեր
Նորմ (2-րդ դաս)
Դիտակետ


Ֆոսֆատ իոն
Կոնց. (մգ/լ)
Հրազդան գետ
2.0
1.5
1.0
0.5
0.0
№55 գյ. Դարբնիկի մոտ
№225 գյ. Գեղանիստի մոտ
№56 գետաբերան
Դեկտեմբեր
Նորմ (2-րդ դաս)
Դիտակետ


Ամոնիում իոն
Կոնց. (մգN/լ)
Գետառ գետ
40
30
20
10
0
I
II
III
IV
V
VI
VII
IX
X
XI
XII
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
Ամիսներ


Նիտրիտ իոն
Կոնց. (մգN/լ)
Գետառ գետ
0.5
0.4
0.3
0.2
0.1
0.0
I
II
III
IV
V
VI
VII
IX
X
XI
XII
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
Ամիսներ

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը (դեկտեմբեր / 2021 թվական)



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 4. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.59	0.33	179	0.28	0.36	79	0.24	0.24	100
Մասրիկ	Ծովակ	2.24	2.98	75	2.22	2.88	77	2.23	2.66	84
Մարտունի	Գեղհովիտ	0.73	0.79	92	0.71	0.82	87	0.69	0.71	97
Արգիճի	Վ.Գետաշեն	2.81	2.33	120	2.84	2.47	115	2.53	2.38	106
Գավառագետ	Նորատուս	3.29	2.93	112	3.11	3.01	103	2.98	2.99	100

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (5-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շողվագ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները.







Սևանա լիճ

2021 թվականի 4-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոօդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 5. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2021 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթաց-քում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	12.67	12.62	13.70	38.99	20.7	38.0	57.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.54	2.80	2.64	7.98	0.00	7.89	18.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	27.4	2.30	5.90	35.6	6.30	43.2	112.3
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.60	12.5
Ընդամենը	45.21	20.32	24.94	90.47	56.6	91.0	166.9
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	22.5	155.9
Գոլորշացում լճի մակերևույթից	52.0	45.2	43.2	140.4	102.0	145.9	178.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	52.40	45.60	43.60	141.6	123.1	176.6	300.2
Կուտակում (նվազում)	-12.7	-12.8	-12.7	-38.2	-205.4	-92.2	2.60
Բացարձակ անկապք	5.51	-12.48	-5.96	-12.93		6.70	
Հարաբերական անկապք %	9.51	27.4	13.7	9.13	0.10	5.90	25.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.54	1278.891	38.2277
Ամսվա վերջին օրը	1900.51	1278.606	38.1895
Միջին ամսական	1900.53	1278.796	38.2150

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.07 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.21 31.07.21 ընթացքում 0.20 (մ)
31.07.21 և 31.07.20 մակարդակի տարբերությունը -0.03մ

Նոյեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթաց-քում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	12.74	12.00	11.67	36.41	24.9	38.4	54.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	1.02	0.95	0.92	2.89	0.00	8.44	22.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	1.80	7.40	6.80	16.0	0.00	31.7	79.5
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.10	9.90
Ընդամենը	18.16	22.95	21.99	63.10	46.4	82.7	141.1
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	19.1	151.0
Գոլորշացում լճի մակերևույթից	29.4	33.7	29.6	92.7	80.6	117.1	151.5
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	29.80	34.10	30.00	93.90	99.3	142.0	260.1
Կուտակում (նվազում)	-25.5	-12.7	-12.8	-51.0	-218.20	-66.4	8.80
Բացարձակ անկապք	13.86	1.55	4.79	20.20		6.90	
Հարաբերական անկապք %	31.7	4.35	13.8	17.7	0.40	7.00	25.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.51	1278.606	38.1895
Ամսվա վերջին օրը	1900.47	1278.225	38.1385
Միջին ամսական	1900.49	1278.415	38.1640

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.10 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.21 31.08.21 ընթացքում 0.10 (մ)
31.08.21 և 31.08.20 մակարդակի տարբերությունը -0.06 (մ)

Դեկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	*Ընդամենը (մլն. մ³)*				*Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.*		
	Ըստ տասնօրյակների			*Ամսվա ընթաց-քում*			
	1	*2*	*3*		*Նվազ.*	*միջին*	*Առավ.*
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	*11.61*	*11.52*	*12.47*	*35.60*	*20.7*	*37.0*	*51.4*
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	*0.92*	*0.92*	*4.13*	*5.97*	*0.00*	*8.15*	*22.9*
Տեղումները լճի մակերևույթի վրա	*3.10*	*0.50*	*9.10*	*12.7*	*0.40*	*22.9*	*56.4*
Ստորերկրյա հոսք	*2.60*	*2.60*	*2.70*	*7.90*	*4.20*	*6.20*	*7.90*
Ընդամենը	*18.23*	*15.54*	*28.40*	*62.17*	*43.1*	*71.7*	*108.4*
ԵԼՔ							
Հրազդան գետով	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*20.5*	*177.0*
Գոլորշացում լճի մակերևույթից	*34.4*	*27.6*	*22.7*	*84.7*	*62.9*	*95.6*	*113.7*
Ստորերկրյա հոսք	*0.40*	*0.40*	*0.40*	*1.20*	*0.50*	*1.10*	*1.70*
Ընդամենը	*34.8*	*28.0*	*23.1*	*85.9*	*63.0*	*122.2*	*240.9*
Կուտակում (նվազում)	*-12.8*	*-12.7*	*-12.8*	*-38.3*	*-178.4*	*-57.3*	*24.9*
Բացարձակ անկապք	*-3.77*	*0.24*	*18.1*	*14.57*		*8.50*	
Հարաբերական անկապք %	*10.8*	*0.85*	*43.9*	*14.5*	*0.40*	*7.70*	*46.2*

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.46	1278.130	38.1258
Ամսվա վերջին օրը	1900.43	1277.845	38.0875
Միջին ամսական	1900.45	1278.035	38.1130

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում *-0.07 (մ)*
Մակարդակի փոփոխությունը 01.01.21 30.09.21 ընթացքում *0.02 (մ)*
30.09.21 և 30.09.20 մակարդակի տարբերությունը *-0.10 (մ)*

2021 թվականի հոկտեմբերի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.54մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 10սմ-ով: 2021 թվականի հոկտեմբերի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.51մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 9սմ-ով, նոյեմբերի 30-ին՝ 1900.47մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 7սմ-ով, իսկ դեկտեմբերի 31-ին կազմել է 1900.43մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 9սմ-ով: 2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը լճի մակարդակը իջել է 11 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը հոկտեմբեր ամսին կազմել է 7.978 մլն մ^3, նոյեմբերին՝ 2.889 մլն մ^3, դեկտեմբերին՝ 5.967 մլն մ^3:

2021 թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.891 կմ^2, ծավալը 38.2277 կմ^3, իսկ եռամսյակի վերջին օրը՝ դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար՝ 1277.845 կմ^2 և 38.0875 կմ^3:

Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բաց թողումը դադարեցվել է սեպտեմբերի 28-ին և գումարային բաց թողումը կազմում է 227.651 մլն մ^3:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի Հավելված 12.1-ի համաձայն: Երեք ամիսների ընթացքում Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են (*Աղյուսակ 11*):

Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.






Կոնց. (մգN/լ)
Նիտրատ իոն
Մեծ Սևան
0.20
0.18
0.16
0.14
0.12
0.10
0.08
0.06
0.04
0.02
0.00
0.5
5
10
20
25
32
Հոկտեմբեր
Նոյեմբեր
Դեկտեմբեր
Խորություն, մ


Կոնց. (մգN/լ)
Նիտրատ իոն
Փոքր Սևան
0.35
0.30
0.25
0.20
0.15
0.10
0.05
0.00
0.5
5
10
20
30
55
70
78
Հոկտեմբեր
Նոյեմբեր
Դեկտեմբեր
Խորություն, մ


Կոնց. (մգ/լ)
Ֆոսֆատ իոն
Մեծ Սևան
0.30
0.25
0.20
0.15
0.10
0.05
0.00
0.5
5
10
20
25
32
Հոկտեմբեր
Նոյեմբեր
Դեկտեմբեր
Խորություն, մ


Կոնց. (մգ/լ)
Ֆոսֆատ իոն
Փոքր Սևան
0.35
0.30
0.25
0.20
0.15
0.10
0.05
0.00
0.5
5
10
20
30
55
70
78
Հոկտեմբեր
Նոյեմբեր
Դեկտեմբեր
Խորություն , մ

Աղյուսակ 6. Սևանա լճի ջրի որակը 2021 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Տեղադրություն, խորություն	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դաս*	*Ջրի որակի ընդհանրական դաս*
Մեծ Սևան, 0.5մ խորություն	*Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
Մեծ Սևան, 5մ խորություն	*Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	ԹՔՊ, ամոնիում իոն	*4-րդ*	
Մեծ Սևան, 10մ խորություն	*ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	*4-րդ*	
Մեծ Սևան, 20մ խորություն	*Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	ԹՔՊ, ամոնիում իոն	*4-րդ*	
Մեծ Սևան, 25մ խորություն	*ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	Նիտրիտ իոն	*4-րդ*	
Մեծ Սևան, 30մ խորություն	*Լուծված թթվածին, ՀԱԱ*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆսֆոր	*4-րդ*	
	Նիտրիտ իոն, մանգան	*5-րդ*	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	*ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ*	*2-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 5մ խորություն	*ՀԱԱ*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 10մ խորություն	*ԹՔՊ, ՀԱԱ*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 20մ խորություն	*ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 30մ խորություն	*Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
Փոքր Սևան, 55մ խորություն	*ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բարիում*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
Փոքր Սևան, 70մ խորություն	*ԹՔՊ*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
	Նիտրիտ իոն, մանգան	*5-րդ*	
Փոքր Սևան, 80մ խորություն	*Նիտրատ իոն*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	*4-րդ*	
	Նիտրիտ իոն, մանգան	*5-րդ*	

Նոյեմբեր

Տեղադրություն, խորություն	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դաս*	*Ջրի որակի ընդհանրական դաս*
Մեծ Սևան, 0.5մ խորություն	*Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
	Նիտրիտ իոն	*5-րդ*	
Մեծ Սևան, 5մ խորություն	*Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՄ*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
	Նիտրիտ իոն	*5-րդ*	
Մեծ Սևան, 10մ խորություն	*ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
	Նիտրիտ իոն	*5-րդ*	
Մեծ Սևան, 20մ խորություն	*ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
	Ամոնիում իոն	*4-րդ*	
	Նիտրիտ իոն	*5-րդ*	
Մեծ Սևան, 25մ խորություն	*ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
	Նիտրիտ իոն	*5-րդ*	
Մեծ Սևան, 30մ խորություն	*ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
	Մանգան	*4-րդ*	
	Նիտրիտ իոն	*5-րդ*	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	*ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱՄ*	*3-րդ*	*4-րդ*
	Նիտրիտ իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 5մ խորություն	*ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱՄ*	*3-րդ*	*4-րդ*
	Նիտրիտ իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 10մ խորություն	*Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱՄ*	*3-րդ*	*4-րդ*
	Նիտրիտ իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 20մ խորություն	*Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱՄ*	*3-րդ*	*4-րդ*
	Նիտրիտ իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 30մ խորություն	*Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	*4-րդ*	
Փոքր Սևան, 55մ խորություն	*ԹՔՊ, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*4-րդ*
	Ամոնիում իոն,նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	*4-րդ*	
Փոքր Սևան, 70մ խորություն	*ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱՄ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*5-րդ*
	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	*4-րդ*	
	Մանգան	*5-րդ*	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 80մ խորություն	Ամոնիում իոն, նիտրատ իոն, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ֆոսֆատ իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	

Դեկտեմբեր

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	Նիտրատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱՍ	4-րդ	
	Մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 70մ խորություն	Բոր, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	ԹՔՊ, նիտրատ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱՍ	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	

ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար)։ Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում։

Աղյուսակ 7. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ազատ	Գառնի	1.79	2.95	61	2.15	3.07	70	2.01	3.04	66
Վեդի	Ուրցաձոր	0.25	0.51	49	0.33	0.72	46	0.48	0.72	67
Արփա	Ջերմուկ	1.86	2.75	68	2.02	2.66	76	1.94	2.58	75
Արփա	Արենի	4.98	7.30	68	7.27	8.11	90	8.16	7.55	108

Մակերևութային ջրերի որակ

Արարատյան ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 13 դիտակետում։

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։ Վայք քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։ Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։ Արենի գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։

Դարբ գետի ջրի որակը ակունքում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
  - որակի մոնիթորինգի դիտակետեր
  - հիդրոլոգիական դիտակետեր
  - Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս





Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 8. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	0.10	0.95	11	0.24	1.09	22	0.19	0.98	20
Ողջի	Կապան	1.37	2.53	54	1.22	2.07	59	1.21	1.61	75
Որոտան	Գորայք	1.84	2.07	89	1.73	2.02	86	1.73	1.99	87

Մակերևութային ջրերի որակ

Հարավային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 21 դիտակետում:

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև հատվաում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի ջրի որակը Քաջարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), և դեկտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաջարան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Կապան քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Կապանի օդանավակայանից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), դեկտեմբեր ին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Սիսիան քաղաքից վերև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածնում հոկտեմեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքից հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (3-րդ դաս):

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- որակի մոնիթորինգի դիտակետեր
- հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- **3-րդ դաս**
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ազատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:

2021 թվականի 4-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են 14-րդ աղյուսակում.

Աղյուսակ 9. Ջրամբարների ջրալցվածությունը. 2021 թվականի 4-րդ եռամսյակում

Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը. մլն.խոր.մ	Փաստացի լցվածությունը, Հոկտեմբերի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, Նոյեմբերի 30-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, Դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	20.44	4	47.45	9	75.43	14
Արփի լիճ	105	16.20	15	17.60	17	18.80	18
Ազատ	70	12.36	18	13.30	19	20.22	29
Ապարան	91	11.22	12	12.66	14	13.71	15
Մարմարիկ	24	0.94	4	1.54	6	1.84	8

Ջրամբարների ջրի որակ

Ախուրյանի ջրամբարի ջրի որակը նոյեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Կեչուտի ջրամբարի ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):





Աղյուսակ 10. Ջրամբարների ջրի որակը 2021թ. 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Ջրային ռեսուրս	***Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)***	***Ջրի որակի ցուցանիշ***	***Ջրի որակի ցուցանիշի դասը***	***Ջրի որակի ընդհանրական դասը***
Կեչուտի ջրամբար (114)	*ամբարտակի մոտ*	-	*2-րդ*	*2-րդ*

Նոյեմբեր

Ջրային ռեսուրս	***Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)***	***Ջրի որակի ցուցանիշ***	***Ջրի որակի ցուցանիշի դասը***	***Ջրի որակի ընդհանրական դասը***
Ախուրյանի ջրամբար (110)	*ամբարտակի մոտ*	-	*2-րդ*	*2-րդ*
Կեչուտի ջրամբար (114)	*ամբարտակի մոտ*	-	*2-րդ*	*2-րդ*

Դեկտեմբեր

Ջրային ռեսուրս	***Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)***	***Ջրի որակի ցուցանիշ***	***Ջրի որակի ցուցանիշի դասը***	***Ջրի որակի ընդհանրական դասը***
Երևանյան լիճ ջրամբար (112)	*ամբարտակի մոտ*	*ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱՍ, ընդհանուր ֆոսֆոր*	*3-րդ*	*3-րդ*

2021 թվականի 4-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 7 դիտակետում: Գետի ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ակնատնտեսական ՍԹԿ-ներով գնահատման համաձայն, դիտվում է պղնձով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹԿՊ$_5$-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների բերված է աղյուսակ 16-ում):

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՋՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ





ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- որակի մոնիթորինգի դիտակետեր
- հիդրոլոգիական դիտակետ
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ

Աղյուսակ 11. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2021 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*											
	Թթվածնի քիմիական պահանջարկ, ՍԹԿ=30 մգ/լ	*Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ*	*Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Ցինկ, ՍԹՀ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Մանգան, ՍԹՀ=0,01 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹՀ=0,5 մգ/լ*	*Արսենիկ, ՍԹԿ=0,04 մգ/լ*	*Սելեն, ՍԹՀ=0,001 մգ/լ*
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*1.5*	*1.6*	*2.1*	*3.3*	*_*	*2.7*	*8.2*	*4.6*	*20.6*	*_*	*2.4*	*3.5*
Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք ((30) AMS-2)	*1.5*	*_*	*2.2*	*3.4*	*_*	*5.9*	*9.5*	*5.2*	*22.4*	*_*	*3.6*	*3.9*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	*_*	*1.9*	*2.2*	*3.4*	*2.4*	*218.5*	*10.3*	*28.1*	*32.7*	*13.2*	*65.0*	*4.1*

Նոյեմբեր

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*												
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ=3 մգ/լ	*Ամոնիում հոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Նիտրիտ հոն, ՍԹԿ=0,024 մգN/լ*	*Սուլֆատ հոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Գալիում ՍԹԿ= 50 գ/լ*	*Լուծրիում ՍԹԿ=120 մգ/լ*	*Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ*	*Կապարի, ՍԹԿ=0,04 մգ/լ*
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	*1.3*	*1.7*	*_*	*_*	*_*	*1.8*	*1.6*	*4.6*	*11.9*	*3.6*	*10.1*	*1.5*	*12.2*
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*_*	*4.3*	*6.5*	*2.6*	*_*	*_*	*1.3*	*5.4*	*6.3*	*6.6*	*19.8*	*1.6*	*13.7*
Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք ((30) AMS-2)	*1.2*	*5.1*	*6.6*	*2.7*	*_*	*1.2*	*2.4*	*12.4*	*6.3*	*7.5*	*20.4*	*1.8*	*15.6*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	*1.2*	*5.7*	*6.3*	*2.8*	*_*	*_*	*6.8*	*16.0*	*6.7*	*10.6*	*21.4*	*4.6*	*22.7*

Դեկտեմբեր

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*										
	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	*Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ*	*Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ*	*Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ*
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	*5.3*	*4.2*	*1.2*	*1.6*	*8.2*	*10.4*	*_*	*6.6*	*19.0*	*2.5*	*23.5*
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	*4.7*	*5.1*	*1.2*	*2.6*	*11.5*	*12.0*	*1.2*	*6.8*	*21.3*	*3.3*	*31.7*
Արարատից քաղաքից 0.5 կմ ներքև (28)	*4.2*	*5.5*	*1.3*	*1.9*	*11.2*	*15.4*	*2.0*	*11.5*	*23.4*	*5.2*	*50.5*